ՄԱՅՐ ԷԹՈՒՈՒՄ
ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ 40-ԱՄՅԱԿԸ

Ամենայն Հայոց Հայրապետի՝ Գարեգին Ա. Կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանում, սույն թվականի հունվարի 19-ին, կիրակի օրը, հավարտ Ս. Պատարագի, հանդիսավորապես նշվեց Մայր Աթոռի ճարտարապետների հանձնախմբի հիմնադրության, գործունեության և մատուցած երախտաշատ ծառայության 40-ամյակը:

Սույն հանդիսությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար տիար Արմեն Սմբատյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի հոգևոր և աշխարհիկ անդամները, Հայաստանի և այլ թեմերի թեմական առաջնորդները, ճարտարապետական հանձնախմբի բոլոր անդամները, հոգևոր հայրեր և այլ պաշտոնական հյուրեր:

Հանդիսությունն սկսվեց Վեհափառ Հայրապետի սեղանօրհնեմի աղոթքով: Գերաշնորհ Տ. Հուսիկ Արքեպիսկոպոս Սանթուրյանը, հանուն ներկաների, բաժակ բարձրացրեց՝ առաջարկելով, որ բոլոր ներկաները հոտնկայս խմեն վասն արևշատ կենաց Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հանդիսության ընթացքում գլխավոր ելույթն ունեցավ Մայր Աթոռի Դիվանապետ Գերշ. Տ. Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյանը: Սրբազան Հայրը հանգամանալից կերպով խոսեց ճարտարապետական հանձնախմբի հիմնադրության մասին՝ նշելով, թե 1955 թվականին, երբ երանաշնորհ Վազգեն Ա. Կաթողիկոսն ընտրվել էր իբրև Ամենայն Հայոց Հայրապետ, ինչպիսի ծանր ու անհուսալի վիճակում էր գտնվում Ս. Էջմիածնի Մայր Աթոռը, և ինչպիսի նախանձախնդրությամբ ու գժվարությամբ կարողացավ Վազգեն Կաթողիկոսն ստեղծել սույն հանձնախումբը՝ վասն բարեզարդումի և շինության Սուրբ Աթոռի: Սրբազանը մեկ առ մեկ նշեց քառասուն տարիների ընթացքում կատարված հսկայական շինարարական ձեռնարկների իրագործման մասին Մայր Աթոռի շրջարակում, ինչպես նաև Մայր Աթոռի սահմաններից դուրս գտնվող թեմերում և շրջաններում: Իր ելույթում Սրբազան Հայրը չմոռացավ նշել անուններն այն երախտաշատ ճարտարապետների՝ Միհայել Մազմանյանի, Ռաֆայել Իսրայելյանի, պրոֆ. Կարո Ղաֆադարյանի, պրոֆ. Ալեքսանդր Սահինյանի, Կոստանդին Հովհաննիսյանի և շատ ուրիշների, ովքեր իրենց հայրենասիրական և եկեղեցասիրական պարտքն են կատարել և բարի հիշատակ թողել իրենցից հետո: Սրբազանն օրհնեց նրանց հիշատակը: Ամփոփելով իր խոսքը՝ Ներսես Սրբազանը երանաշնորհ Վազգեն Ա և այժմ Գարեգին Ա Կաթողիկոսներին նմանացրեց եզեկիել մարգարեին: Առաջինի միջոցով Աստված կենդանություն պարգևեց դաշտում չորացած ոսկորներին և երկրորդի միջոցով Աստված կյանք ու հոգի է պարգևել Հայաստանյայց Սուրբ Եկեղեցուն և ողջ հայությանը: Սրբազանն իր խոսքն ավարտեց «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» շարականի բառերով՝ «շինեսցուքը» հասկանալով թե՛ նյութական և թե՛ հոգևոր իմաստով:

Հանդիսության տոնական և ջերմ մթնոլորտում ողջույնի խոսքերով հանդես

եկան նախարար տիար Արմեն Ամբատյանը, Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանը, Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Բուճիաքյանը, Տ. Զավեն Արքեպիսկոպոս Չինչինյանը, Տ. Պարգև Եպիսկոպոս Սարտիրոսյանը, պրոֆ. Վարազդատ Հարությունյանը և ակադեմիկոս Գրիգոր Խանջյանը: Բոլոր ելույթ ունեցողները դրվատանքի խոսքեր ասացին ճարտարապետական հանձնախմբի 40-ամյա ծառայության մասին, ինչպես նաև անդրադարձան հանձնախմբի աշխատանքների հետ առնչվող զանազան մանրամասների ու դեպքերի:

Հուսկ բանքով խոսք առաւ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Նա մեծապես գնահատեց 40-ամյա անսակարկ և նվիրված աշխատանքը հանձնախմբի բոլոր անդամների, որոնցից շատերն այսօր մեզ հետ չեն, բայց նրանց հոգիներն այժմ երկնքում են երկնքում: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև, որ կյանքի ամենածանր ու դժվարին տարիներին Վազգեն Ա Կաթողիկոսի կողքին, հանձնախմբի կատարած գործը սկիզբը եղավ տասնամյակներ շարունակ Հայ եկեղեցու լուռած զանգակատների զանգերի վերաղողանջին և գնահատեց կատարված հսկայածավալ աշխատանքն իբրև հերոսական գործ: Վեհափառն օրհնեց հանձնախմբի անդամներին՝ հիշելով նաև այն երախտավորներին, ովքեր արդեն հեռացել են կյանքից: Վերջում Հայոց Հայրապետը *Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի* շքանշանի արժանացրեց հանձնախմբի երկարամյա ատենապետ *պրոֆ. Վարազդատ Հարությունյանին* և ճարտարապետ *Պաղտասար Արզումանյանին*՝ խառասուն երկար տարիներ, հանձնախմբի հիմնադրության օրվանից մինչև այսօր, անդադար և անսակարկ ծառայողներին:

Ամենաջերմ մթնոլորտի մեջ իր ավարտին հասավ այս գնահատանքի և երախտիքի հանդիսությունը:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ